


# ZIKA




Պաշտպանե՛ք Ձեզ՝ մյուսներին պաշտպանելու համար

## ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ Է ԱՅՆ ՏԱՐԱԾՎԵԼ


Զիկան մոծակների կամ մարդկանց միջոցով տարածվող վիրուս է




### Մոծակներից դեպի մարդ՝



### Մարդուց դեպի մոծակ՝



### Մարդուց մարդ՝



## ՈՐՈՒՔ ԵՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ



Տենդ



Ցան



Հոդացավ



Կարմիր աչք

Սրանք կարող են միայն մի քանի օր տևել: Սակայն Զիկայով հիվանդ որոշ մարդիկ որևէ նշան չեն ունենում:

**Խոսք Ձեր բժշկի հետ Զիկայի թեստ անցնելու համար, եթե՝**

- ◆ Դուք Զիկայի նշաններ ունեք կամ
- ◆ Հղի եք և Դուք կամ Ձեր գուգրնկերը ճամփորդել եք մի վայր, որտեղ Զիկա կա:



## ԻՆՉ ԿԼԻՆԻ, ԵԹԵ ԶԻԿԱ ՈՒՆԵՆԱՔ

Զիկան չի ազդում բոլորի վրա: Սակայն որոշ անձանց համար ազդեցությունը կարող է լուրջ լինել:

### Չծնված մանուկ

Մանուկները կարող են Զիկայով վարակվել նախքան ծնվելը: Զիկայով հիվանդ մանուկները կարող են միկրոցեֆալիա ունենալ: Մա այն է, երբ մանկան գլուխը և ուղեղը սովորականից փոքր են: Զիկան կարող է ազդել մանկան լսողության, հոգեկան կարողության և աճի վրա:



### Չափահասներ

Երբ չափահասները հիվանդանում են Զիկայով, հնարավոր է, որ նյարդային զսպվածք ունենան: Դրա հետևանքով մկաններում թուլություն կամ թմրածություն կզգան: Զիկան կարող է նաև կաթվածահարություն առաջացնել: Դրա հետևանքով մարդը չի կարող շարժել իր մարմնի որոշ մասերը:



TRANSLATED BY: HASMIK KHATCHIKIAN

## ԵԹԵ ԶԻԿԱ ՈՒՆԵՔ

Զիկան **հնարավոր չէ բուժել**:

18 Տարեկանից ցածր երեխաները պետք է այցելեն բժշկի:

Եթե Դուք Զիկայով հիվանդ չափահաս եք, Դուք կարող եք օգնել Ձեր մարմնին ավելի լավ զգալ:

Շատ  
հանգստացեք



Շատ ջուր  
խմեք



Տենդի կամ ցավի  
համար դեղ խմեք  
(acetaminophen)



## ԻՆՉՊԵՍ ԿԱՆԽԱՐԳԵԼԵԼ ԱՅՆ

Այս պահին Զիկան կանխարգելելու համար **պատվաստանյութ չկա**: Զիկան կանխարգելելու լավագույն միջոցն է պաշտպանել ինքներդ Ձեզ և այլոց: Ահա մի քանի քայլեր այդ ուղղությամբ՝

Օգտագործեք DEET-  
ով միջատի ցող



Հագեք երկար թևերով  
շապիկ և շալվար



◆ Խուսափեք այցելել այնպիսի վայրեր, որտեղ Զիկա է հայտնաբերվել

☑ Այցելեք <http://wwwnc.cdc.gov/travel/page/zika-information>

◆ Խուսափեք Զիկա տարածել սեքսի միջոցով

☑ Օգտագործեք պահպանակներ, ԿԱՍ

☑ Զիկայով վայրերից վերադառնալուց հետո սպասեք սեքս ունենալուց առաջ, անգամ եթե Զիկայի նշաններ չունեք,




- **Կանայք**. սպասեք 8 շաբաթ Զիկայով վարակված տարածքը լքելուց հետո
- **Տղամարդիկ**. սպասեք 6 ամիս Զիկայով վարակված տարածքը լքելուց հետո

## ՀԻՇՆԵՔ

Դուք կարող եք Զիկա ունենալ և չգիտենալ դրա մասին: Պաշտպանեք Ձեզ մյուսներից պաշտպանելու համար:  
Եթե հարցեր ունեք, զրուցեք Ձեր բժշկի հետ:

◆ Մոծակներին տուն մի թողեք: Ձեր բժշկի գրասենյակից նոր գաղափարներ հարցրեք:

Դռներն ու պատուհանները փակ պահեք



Բաց դռների և պատուհանների համար ցանց օգտագործեք



Ջուր պարունակող որևէ ապրանք (օրինակ՝ բույսի աման կամ հին անվաղողեր) դատարկ և մաքուր պահեք

